ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Հովսեփ Օրբելու ծննդյան 125-ամյակի կապակցությամբ 2012 թվականին Կենտրոնական բանկը թողարկել է արծաթե հուշադրամ »



ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ (ՓԼ/ԱՖ) ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի համակարգի կատարելագործման և այն միջազգային պրակտիկայում կիրառելի չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ 2012 թվականին շարունակվել են Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2010-2013 թթ. ազգային ռազմավարությամբ նախանշված նպատակների իրագործմանն ուղղված աշխատանքները: Մասնավորապես՝ կատարվել են ՖԱԹՖ-ի հանձնարարականներին համապատասխանող օրենսդրության ներդրման, միջազգային և ներպետական համագործակցության ամրապնդման, հաշվետվություն տրամադրող անձանց աշխատակիցների՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում գիտելիքների զարգացման, Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի (այսուհետ՝ ՖԴԿ) և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ներառված այլ մարմինների աշխատակիցների վերապատրաստման աշխատանքներ:

2012 թ. դեկտեմբերին Եվրոխորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի 40-րդ լիագումար նիստում հաստատվել է ՀՀ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի երրորդ փուլի գնահատման երկրորդ Առաջընթացի հաշվետվությունը:

2012 թ. ՖԴԿ-ի կողմից մշակվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի 2013 - 2015 թթ. ազգային ռազմավարությունը», որը հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի նիստում:

Օրենսդրական զարգացումները

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի անհրաժեշտ մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխանող օրենսդրության ներդրման աշխատանքների շրջանակում դեռևս 2010 թվականին ՖԴԿ-ի կողմից այլ իրավասու մարմինների աջակցությամբ մշակված «Փողերի լվացման և ահաբեկչության

ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և 14 այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի վերաբերյալ քննարկում է տեղի ունեցել ՀՀ Կառավարությունում, որի արդյունքում որոշվել է նշված նախագծերը կրկին ուղարկել շահագրգիռ գերատեսչություններին և մարմիններին՝ հայտնելու իրենց դիրքորոշումն այդ նախագծերի վերաբերյալ ներկայացված սկզբունքային առաջարկությունների և դիտողությունների չընդունման կամ մասնակի ընդունման վերաբերյալ: Դիրքորոշումների ամփոփումից հետո նախագծերը կրկին ներկայացվել են ՀՀ Կառավարություն՝ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու նպատակով: ՀՀ Կառավարության կողմից ուղարկված վերջնական առաջարկությունների և դիտողությունների հիման վրա օրենսդրական փաթեթը լրամշակվել է, որից հետո հավանության է արժանացել ՀՀ Կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով՝ ընդունման:

2012 թ. ընդունվել են «Կեղծ և շինծու գործարքների (պայմանագրերի) միջոցով փողերի լվացումը» վերտառությամբ 11-րդ և «Կանխավճարային քարտերի միջոցով փողերի լվացումը» վերտառությամբ 12-րդ տիպաբանությունները, ինչպես նաև փոփոխություններ և լրացումներ են կատարվել մի շարք իրավական ակտերում:

Կատարված վերլուծությունները և դրանց արդյունքները

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու համար 2012 թ. կայացվել են 2 մեղադրական դատավճիռներ, որոնցով դատապարտվել է 2 անձ: Դատավճիռներ կայացվել են համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակության, խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու, գողության և դրանց արդյունքում ստացված գումարների օրինականացման համար առաջադրված մեղադրանքներով:

Ստորև ներկայացված է իրականացված վերլուծությունների արդյունքում 2010 - 2012 թթ. փողերի լվացման վարկածով իրավապահ մարմիններին տրամադրված տեղեկությունների, հարուցված քրեական գործերի, կայացված դատավճիռների, ինչպես նաև կասեցված և բռնագրավված միջոցների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն.



	2010 թ.	2011 թ.	2012 թ.	Ընդամենը
ՖԴԿ-ի կողմից հաղորդումներ իրավապահ մարմիններին	23	17	11	51
ՖԴԿ-ի կողմից իրավապահ մարմիններից խնդրարկված տեղեկատվություն	15	33	11	59
Իրավապահ մարմինների կողմից ՖԴԿ-ից խնդրարկված տեղեկատվություն	53	58	61	**172**
Հարուցված քրեական գործեր	13	10	9	**32**
Կայացված դատավճիռներ	3	5	2	**10**

	Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կասեցված գործարքներում և գործարար հարաբերություններում ներգրավված միջոցներ	Բռնագրավման ենթակա գումարներ (ՀՀ դրամ)
2010 թ.	345.000 ՀՀ դրամ, 290.000 ԱՄՆ դոլար	514.026.500 ՀՀ դրամ
2011 թ.	0	415.517.535 ՀՀ դրամ
2012 թ.	23.003.274 ՀՀ դրամ	12.220.947 ՀՀ դրամ
Ընդամենը	**23.348.274 ՀՀ դրամ, 290.000 ԱՄՆ դոլար**	**941.764.982 ՀՀ դրամ**

Միջազգային համագործակցությունը

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ-ն շարունակել է ակտիվ համագործակցությունը միջազգային գործընկերների հետ:

2012 թ. ՖԴԿ ներկայացուցիչները մասնակցել են Եվրոխորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի, Էգմոնտ խմբի, Եվրասիական խմբի լիագումար նիստերին, Վարշավայի կոնվենցիայի համաձայն հիմնադրված Կողմերի համաժողովի նիստին, ՖԱԹՖ-ի աշխատանքային խմբի հանդիպմանը, ինչպես նաև ներգրավված են եղել այդ կառույցների կողմից իրականացվող ծրագրերում:

Միջազգային կառույցների կողմից կիրառվող սահմանափակումների վերաբերյալ պահանջների կատարման նպատակով ՖԴԿ ինտերնետային կայքում հրապարակվել են ՖԱԹՖ-ի՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ռազմավարական բացեր ունեցող երկրների վերաբերյալ հայտարարությունները, ինչպես նաև այն երկրների ցանկը, որոնք ՖԱԹՖ-ի՝ ՓԼ/ԱՖ չափանիշներին համապատասխանության ընթացիկ դիտանցման շրջանակներում որակվել են որպես ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ռազմավարական բացեր ունեցող, և դրանք վերացնելու նպատակով ՖԱԹՖ-ի հետ համատեղ մշակել է գործողությունների ծրագիր:

2012 թ. շարունակվել են աշխատանքները օտարերկրյա ՖՀՄ-ներին տրամադրվող տեխնիկական օժանդակության շրջանակում:

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ-ն փոխըմբռնման հուշագրեր է կնքել մի շարք արտասահմանյան ՖՀՄ-ների հետ:

ԵՐԿԻՐ	ՖՀՄ անվանումը
Ճապոնիա	Ճապոնիայի ազգային հասարակական անվտանգության կոմիտեի ֆինանսական հետախուզության կենտրոն
Կիպրոս	Կիպրոսի Հանրապետության՝ փողերի լվացման դեմ պայքարի մարմին
Խորվաթիա	Խորվաթիայի ֆինանսների նախարարության՝ փողերի լվացման դեմ պայքարի գրասենյակ
Միացյալ Թագավորություն	Միացյալ Թագավորության կազմակերպված հանցավորության գրասենյակի ֆինանսական հետախուզության մարմին

Ուսուցում և խորհրդատվություն

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի արդյունավետության բարձրացման կարևոր նախադրյալներից է ուսուցման կազմակերպումն ու իրականացումը: Այս առումով, 2012 թվականին ՖԴԿ, ԿԲ այլ ստորաբաժանումների, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ներգրավված մի շարք պետական մարմինների, այդ թվում՝ իրավապահ և վերահսկող մարմինների, հաշվետվություն տրամադրող անձանց աշխատակիցների՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում գիտելիքների զարգացման նպատակով կազմակերպվել են մի շարք ուսուցողական ծրագրեր: Մասնավորապես պետք է նշել միջազգային տարբեր կառույցների, այդ թվում՝ ԱՄՀ-ի, ԵԱՀԿ-ի, ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից կազմակերպված դասընթացները և սեմինարները: Բացի, այդ ՖԴԿ-ի կողմից ԵՎՐԱԶԵՍ-ի շրջանակներում կազմակերպվել են սեմինարներ ԵՎՐԱԶԵՍ-ի անդամ երկրների կենտրոնական բանկերի մասնագետների համար, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելումը ֆինանսական հաստատություններում» թեմայով դասընթաց է անցկացվել ՀՀ ֆինանսական հաստատությունների ներքին դիտարկումների (հսկողության) գործառույթն իրականացնող աշխատակիցների, ներքին աուդիտի անդամների, հաճախորդների սպասարկում իրականացնող աշխատակիցների, ՓԼ/ԱՖ ներքին ռիսկերի հետ առնչվող այլ աշխատակիցների համար:

Ուսուցման և խորհրդատվության ոլորտում խիստ կարևորվում են նաև ռազմավարական ծրագրով նախատեսված, հաշվետու անձ համարվող ոչ ֆինանսական կազմակերպությունների և անձանց, ինչպես նաև նրանց նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների աշխատակիցների գիտելիքների զարգացմանն ուղղված ծրագրերը: Այս նպատակով ԱՄՀ փորձագետների հետ համատեղ հաշվետու տարվա ընթացքում դասընթաց է անցկացվել ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների և նոտարների, փաստաբանների, հաշվապահների, աուդիտորների, խաղատների, թանկարժեք մետաղների դիլերների, ռիելթորների համար:



«Աշխարհի հայտնի ռեժիսորները»
միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում
Կենտրոնական բանկը 2012 թվականին թողարկել է
«Սերգեյ Փարաջանով» արծաթե հուշադրամը »

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄ »

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

2012 թ. հունվարի 27-ին «Bureau Veritas Certification» ընկերության կողմից Հայաստանում առաջինը Կենտրոնական բանկին պաշտոնապես տրամադրվել է ISO/IEC 27001:2005 «Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգեր՝ պահանջներ» միջազգային ստանդարտին համապատասխանության հավաստագիր:

Հավաստագիրը վկայում է՝ Կենտրոնական բանկում ստեղծված է, արդյունավետ գործում և անընդհատ բարելավվում է տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ, որի շնորհիվ՝

- տեղեկատվական կարևոր ակտիվները հաշվառված են,
- տեղեկատվական վտանգները վերահսկելի են և կառավարելի,
- ապահովված է տեղեկատվական անվտանգության միջադեպերին ժամանակին արձագանքումը, հետաքննությունը և դասերի քաղումը,
- ապահովված է գործունեության անընդհատությունը:

«Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգեր՝ պահանջներ» միջազգային ստանդարտին համապատասխանության հավաստագիր ստացել են այնպիսի խոշոր ֆինանսական կառույցներ, ինչպիսիք են Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը, Նյու Յորքի դաշնային պահուստային բանկը և այլն:

Ներկայումս կատարվում են ISO/IEC 27001:2005 ստանդարտի ընդլայնված շրջանակով ներդրման աշխատանքներ՝ ներառելով Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգը:

Ստանդարտի ներդրման ընթացքում կատարվել է մեծածավալ աշխատանք, այդ թվում՝ ԿԲ կանոնակարգիչ փաստաթղթերի համապատասխանեցումը ստանդարտի պահանջներին: Մշակվել է մոտ 20 նոր փաստաթուղթ, խմբագրվել են տեղեկատվական անվտանգությանն առնչվող կանոնակարգերը:

2012 թ. հունվարի 19-ին հաջողությամբ ավարտվել է ISO/IEC 27001:2005 ստանդարտին համապատասխանության վկայագրման՝ «Bureau Veritas Certification» վկայագրման մարմնի կողմից անցկացվող աուդիտը: Աուդիտորական խումբն արձանագրել է, որ ներդրման ընթացքում կատարված մեծ ծավալի որակյալ աշխատանքի արդյունքում Կենտրոնական բանկի տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը լիովին համապատասխանեցվել է ստանդարտի պահանջներին:

Տեղեկատվական անվտանգության գործընթացների մեծ մասը որակավորվել է որպես ընդօրինակման արժանի «լավագույն փորձ» (best practice), որը հազվադեպ երևույթ է նշված ստանդարտի ներդրման ոլորտում:

Հունվարի 24-ին «Bureau Veritas Certification» հավաստագրող կազմակերպությունը պաշտոնապես հայտարարել է Կենտրոնական բանկը ISO/IEC 27001:2005 ստանդարտով հավաստագրելու մասին, իսկ հունվարի 27-ին թողարկել և Կենտրոնական բանկին է հանձնել հիշյալ հավաստագիրը:

Կենտրոնական բանկի հավաստագրումը դրական ազդեցություն կունենա ՀՀ ֆինանսական համակարգում տեղեկատվական անվտանգության մակարդակը միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանեցման գործընթացի վրա:



BUREAU VERITAS
Certification

Certification
Awarded to

THE CENTRAL BANK OF ARMENIA
6 V. Sargsyan Str., Yerevan, 0010, Republic of Armenia

Bureau Veritas Certification certify that the Management System of the above organisation has been audited and found to be in accordance with the requirements of the management system standards detailed below

STANDARD

ISO/IEC 27001:2005

SCOPE OF SUPPLY

THE INFORMATION SECURITY MANAGEMENT SYSTEM IN RELATION TO ALL BANK'S OPERATIONS AND SERVICES IN ARMENIA, EXCLUDING THE PAYMENT SYSTEM AND STATE SECRECY.

Statement of Applicability Version 2.0 dated 19/01/2012

Original Approval Date: 27 January, 2012

Subject to the continued satisfactory operation of the organisation's Management System, this certificate is valid until: 26 January, 2015
To check this certificate validity please call (380 44 490 29 79)
Further clarifications regarding the scope of this certificate and the applicability of the management system requirements may be obtained by consulting the organisation

O. Adamenko
Date: 27 January, 2012

Certificate Number: IN.12.2000U

Bureau Veritas Certification using the accreditation certificate number 008

008

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2012 թվականին Կենտրոնական բանկն առաջնային է համարել մասնագիտական խոր գիտելիքներ ունեցող, աշխատանքն արդյունավետ կատարելու համար անհրաժեշտ հմտություններով օժտված աշխատակիցների ներգրավումն ու նրանց շարունակական զարգացումը, ում նվիրվածության և գիտելիքներն ու հմտությունները հօգուտ ռազմավարական նպատակների օգտագործելու պատրաստակամության շնորհիվ Կենտրոնական բանկն իրականացրել է իր առջև դրված խնդիրները:

Տարեվերջի դրությամբ Կենտրոնական բանկի աշխատակիցների (անորոշ և որոշակի ժամկետով աշխատողներ) թիվը կազմել է 788՝ 455 կին և 333 տղամարդ, միջին տարիքը՝ 39: Տարվա ընթացքում աշխատանքից ազատվել է 52 աշխատակից, իսկ հոսունությունը կազմել է 6,60%:

Կենտրոնական բանկում թափուր աշխատատեղերը համալրվել են հիմնականում մրցութային կարգով: 2012 թ. ներդրվել է արտաքին մրցույթների դիմումների ընդունման ավտոմատացված համակարգ: Ներքին և արտաքին մրցույթների արդյունքներով համալրվել է 30 աշխատատեղ: 8 աշխատակից ունեցել է առաջխաղացում, որից 6-ը զբաղեցրել են ղեկավար պաշտոններ:

Կենտրոնական բանկը, «Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում» գիտական, հետազոտական կարողությունների ձևավորման և հզորացման նպատակով, 2012 թ. պարբերաբար հանդես է եկել տնտեսական հետազոտությունների ստորաբաժանման համար աշխատակիցներ ներգրավելու հայտարարություններով: Այս ստորաբաժանման հիմնական գործառույթը տնտեսագիտական տեսությունների անընդհատ զարգացմանը զուգընթաց, կիրառական տնտեսագիտության միջազգային փորձին համահունչ մակրո- և միկրոտնտեսական հետազոտությունների իրականացումն է: 2012 թ. անցկացված մրցույթների արդյունքում ԿԲ տնտեսական հետազոտությունների վարչությունը համալրվել է 6 աշխատակցով: «Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի» տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ձևավորման և սպասարկման նպատակով համալրվել է նաև Կենտրոնական բանկի տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունը:

Ապահովելով Կենտրոնական բանկի կառուցվածքի և կառավարման համակարգի շարունակական օպտիմալացումը՝ ՀՀ կենտրոնական բանկում տեղի են ունեցել կառուցվածքային փոփոխություններ: Մասնավորապես՝ դրամավարկային քաղաքա-կանության հիմնական մոդելի ընդլայնման և անընդհատ զարգացման, կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումների արդյունք-



ների ինտեգրման, արտաքին հաղորդակցության ու հրապարակայնության մակարդակի բարելավման նպատակով վերակազմավորվել է Դրամավարկային քաղաքականության ստորաբաժանումը: Վերոնշյալ խնդիրների իրականացումն առավել սահուն և լիարժեք դարձնելու համար Դրամավարկային քաղաքականության վարչության 4 աշխատակիցներ մասնակցել են Արժույթի միջազգային հիմնադրամի հետազոտական կենտրոնի կողմից կազմակերպված «Բարձրագույն մակրոտնտեսական մոդելավորում» թեմայով (Advanced Macro-Modeling) երկարաժամկետ վերապատրաստման դասընթացին: Վիճակագրության վարչության գործառույթներում ավելացել է ՀՀ տնտեսությունում տեղի ունեցող երևույթների վերաբերյալ միկրոտվյալների շտեմարանի ստեղծման և դրա հիման վրա հաշվետվության կազմման գործընթացը՝ հիմնված միջազգային փորձի վրա: Միջազգային լավագույն փորձի հիման վրա կեղծ դրամանիշերի վերաբերյալ վերջնական փորձագիտական եզրակացության տրամադրման գործառույթը փոխանցվել է ՀՀ կենտրոնական բանկին, որի արդյունքում Դրամաշրջանառության կարգավորման ստորաբաժանման կառուցվածքում բացվել է համապատասխան բաժին:

ԿԲ աշխատակիցներին մոտիվացնելու, աշխատանք - ընտանիք հավասարակշռությունն ապահովելու նպատակով 2012 թ. Կենտրոնական բանկի աշխատակիցների համար մշակվել է աշխատանքի այլընտրանքային տարբերակի հնարավորության՝ վիրտուալ աշխատանքի իրականացման քաղաքականություն:

Կենտրոնական բանկը շարունակել է երիտասարդ մասնագետներ (առանց աշխատանքային փորձի) ընտրելու, նրանց մասնագիտական գիտելիքները զարգացնելու և թափուր աշխատատեղերում ապագայում ներգրավելու քաղաքականությունը: Երիտասարդ մասնագետները ընտրվել են առավելապես Ֆինանսաբանկային քոլեջ հիմնադրամի կողմից կազմակերպվող «ՀՀ կենտրոնական բանկ. ներածական դասընթաց» ուսումնական ծրագրի մասնակիցներից: 2012 թվականին Կենտրոնական բանկի ստորաբաժանումներում որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով աշխատել են 80 երիտասարդ մասնագետներ, որոնցից 18-ը համալրել են Կենտրոնական բանկի թափուր աշխատատեղերը:

Երիտասարդ ապագա մասնագետների համար բանկում կազմակերպվում են գիտահետազոտական և աշխատանքային պրակտիկաներ, որոնք նպաստում են ուսանողների տեսական գիտելիքների ամրապնդմանն ու աշխատանքային փորձառության ձեռքբերմանը: 2012 թ. Կենտրոնական բանկն ակտիվ համագործակցել է բուհերի հետ, մասնակցել բուհական մի շարք հաստատությունների կողմից կազմակերպված «կարիերայի օրերին»: Տարվա ընթացքում Կենտրոնական բանկում գիտահետազոտական պրակտիկա է անցել ՀՀ բուհերի 137 ուսանող և աշխատանքային պրակտիկա՝ արտասահմանյան լավագույն բուհերի 5 ուսանող:

Կենտրոնական բանկի աշխատակիցները դասավանդման միջոցով իրենց փորձն ու գիտելիքներն են փոխանցում երիտասարդ մասնագետներին: Հաշվետու տարվա ընթացքում Կենտրոնական բանկի 35 աշխատակից դասավանդել է Երևանի պետական համալսարանում, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, Հայաստանում ֆրանսիական համալսարանում, Հայաստանի Ամերիկյան համալսարանում, Հայաստանի պետական կառավարման ակադեմիայում, Ռուս-հայկական սլավոնական համալսարանում, «Ֆինանսաբանկային քոլեջ» հիմնադրամում:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շարունակելով իր որդեգրած քաղաքականությունը՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ և հետազոտական ունակություններով օժտված ուսանողներին խրախուսելու նպատակով 2012 թ. անցկացրել է Իսահակ Աբասի Իսահակյանի անվան կրթաթոշակի նշանակման մրցույթ և Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի՝ 3, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի՝ 2, Հայաստանի պետական համալսարանի Գյումրու մասնաճյուղի՝ 1 և Արցախի պետական համալսարանի՝ 1 լավագույն ուսանողների հատկացրել կրթաթոշակ:

Անձնակազմի մասնագիտական որակավորման բարձրացում

Կենտրոնական բանկը, կարևորելով աշխատակիցների մասնագիտական որակավորման բարձրացումը, համապատասխան ռեսուրսներ է հատկացրել աշխատակիցների շարունակական մասնագիտական զարգացումն ապահովելու համար: 2012 թվականին լրամշակվել է աշխատակիցների ուսուցման և վերապատրաստման քաղաքականությունը, վերապատրաստման արդյունքի գնահատման գործիքակազմը՝ առավել կարևորելով և՛ նոր ընդունված, և՛ տարիների փորձ ունեցող աշխատակիցների հմտությունների զարգացումը, ինչպես նաև անմիջական ղեկավարների ներգրավվածությունը վերապատրաստման գործընթացում: Հարցաթերթիկների միջոցով գնահատվել է վերապատրաստման դասընթացների արդյունավետությունը և ապահովվել կիրառելի փորձի ներդրման առաջարկությունների ներկայացումը: Շահագրգիռ ստորաբաժանումների աշխատակիցներին փոխանցվել են վերապատրաստման արդյունքում ստացած գիտելիքները, ինչպես նաև քննարկվել աշխատանքային խնդիրների բարելավմանը վերաբերող առաջարկները: 2012 թ. ընթացքում արտասահմանյան ֆինանսական կազմակերպություններում և ՀՀ ուսումնական կենտրոններում վերապատրաստվել է 370 աշխատակից:



Կենտրոնական բանկի աշխատակիցների գիտելիքների փոխանցման շարունակականությունն ապահովելու, փորձառու աշխատակիցների ներուժն օգտագործելու նպատակով կատարվել են ներքին ռեսուրսների օգտագործմամբ դասընթացներ մշակելու և անցկացնելու աշխատանքներ:

2012 թվականին Կենտրոնական բանկի աշխատակիցները ակտիվ մասնակցել են ՀՀ տարածքում և արտերկրում կազմակերպված բազմաթիվ վերապատրաստման ծրագրերի, սեմինար-խորհրդակցությունների, ինչպես նաև փորձի փոխանակման նպատակով այցելել են արտերկրի կենտրոնական բանկեր: 2012 թ. շարունակվել է համագործակցությունը Եվրասիական տնտեսական հանրության երկրների, Անգլիայում կենտրոնական բանկերի ուսուցողական կենտրոնի, Ավստրիայում՝ Վիեննայի միացյալ ինստիտուտի, Գերմանիայի Բունդեսբանկի, Ֆրանսիայի, Նիդեռլանդների, Շվեյցարիայի, Լեհաստանի, Չեխիայի ազգային և կենտրոնական բանկերի, Ֆինանսական կայունության ինստիտուտի հետ. կազմակերպվել է արտաքին վերապատրաստման 185 ստանդարտ և 45 հատուկ դասընթաց, ընդ որում՝ հատուկ դասընթացների մի մասը անցկացվել է Հայաստանի Հանրապետությունում: Նշված դասընթացներին Կենտրոնական բանկից մասնակցել է 229 աշխատակից:

Կենտրոնական բանկը շարունակել է ընդլայնել համագործակցության շրջանակը: Բանակցությունների արդյունքում սկսել է համագործակցությունը Լյուքսեմբուրգի Դքսության ֆինանսական տեխնոլոգիաների փոխանցման գործակալության հետ: Արդյունքում կազմակերպվել է «Համապատասխանելիության գործառույթներ» թեմայով դասընթաց, որի ընթացքում վերապատրաստվել են ոչ միայն ՀՀ կենտրոնական բանկի 9 աշխատակիցներ, այլ նաև 13 առևտրային բանկերի 15 մասնագետներ:

Կենտրոնական բանկը ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի, Նիդեռլանդների, Ֆրանսիայի կենտրոնական բանկի, Գերմանիայի Բունդեսբանկի, Կանադայի Տորոնտո կենտրոնի, Լեհաստանի ազգային բանկի, Եվրասիական տնտեսական հանրության, ինչպես նաև ԱՄՀ-ի հետ համատեղ Հայաստանում կազմակերպել է 11 տարածաշրջանային դասընթացներ, որոնց ընթացքում վերապատրաստվել են Կենտրոնական բանկի 180 աշխատակիցներ, իսկ օտարերկրյա բանկերից հրավիրված՝ 60 մասնակիցներ:

Կենտրոնական բանկի 27 աշխատակից իրական ժամանակի ռեժիմով մասնակցել է Ֆինանսական կայունության ինստիտուտի կողմից կազմակերպվող ֆինանսական վերահսկողության ուսուցողական դասընթացներին:

Կենտրոնական բանկի աշխատակիցների անգլերենի իմացության մակարդակը ստուգելու և անգլերենով անցկացվող վերապատրաստման ծրագրերին, գործուղումներին նրանց արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով 2012 թ. Կենտրոնական բանկի 29 աշխատակից դրական արդյունքներով հանձնել է Հայաստանում Ամերիկյան համալսարանի հետ Կենտրոնական բանկի համագործակցության արդյունքում մշակված «Անգլերենի գիտելիքների ստուգման թեստ»:

2012 թ. ակտիվորեն կիրառվել է նաև աշխատակիցների մասնագիտական զարգացմանը նպատակաուղղված մեկ այլ գործիք: Կենտրոնական բանկում ղեկավար կադրերի պահուստն ապահովելու, փորձառու մասնագետների գիտելիքներն ընդլայնելու, երիտասարդ մասնագետների գիտելիքները զարգացնելու նպատակով իրականացվել է աշխատանքի շրջափոխում (ռոտացիա): 2012 թ. շրջափոխվել է 15 աշխատակից:

Կենտրոնական բանկի աշխատակիցները մասնակցում են ֆինանսական, հաշվապահական, աուդիտորական, ապահովագրական, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների միջազգային մասնագիտական որակավորման քննությունների կամ արդեն իսկ ունեն նշված ոլորտների որակավորումներ: 2012 թ. որակավորման քննություն է հանձնել 47 աշխատակից, ընդ որում՝ ACCA՝ 26 աշխատակից, CFA՝ 9 աշխատակից, CII՝ 2 աշխատակից և 10 աշխատակից՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի միջազգային մասնագիտական որակավորման քննություն:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2012 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է բազմակողմ և երկկողմ համագործակցությունը միջազգային և օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների հետ:

Հաշվետու տարվա ընթացքում Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) և Համաշխարհային բանկի (ՀԲ) տեխնիկական օժանդակության շրջանակում ՀՀ կենտրոնական բանկն ընդունել է ԱՄՀ բանկային վերահսկողության և ֆինանսական գործառնությունների, հաշվապահական հաշվառման, դրամավարկային քաղաքականության և վիճակագրության բնագավառների առաքելությունները: 2012 թ. փետրվարին Ֆինանսական հատվածի գնահատման ծրագրի (Financial Sector Assessment Program, FSAP) շրջանակում Կենտրոնական բանկ է այցելել ԱՄՀ/ՀԲ առաքելությունը՝ Ջենիֆեր Էլիոթի և Ջոն Պոլների գլխավորությամբ: 2012 թ. մարտին Կենտրոնական բանկ է այցելել ԱՄՀ-ի՝ Հայաստանի գծով գործադիր տնօրեն Մենո Սնելը:

Գործնական կապերն ընդլայնելու, երկրի մակրոտնտեսական վիճակին ծանոթանալու և բանակցություններ վարելու նպատակով հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ կենտրոնական բանկ են այցելել Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (Japan International Cooperation Agency, JICA) փորձագետները, Չինաստանի «Sinocop Resources Holdings Ltd.» և «China Sports Development Ltd.»-ի գործարար խմբերի ներկայացուցիչները՝ Չինաստանի զարգացման պետական բանկի նախագահի տեղակալ Գաո Ցզյանի գլխավորությամբ, Եվրոպական ներդրումային բանկի (European Investment Bank) ներկայացուցիչները, ԱՄՀ ներկայացուցիչները՝ «Դրամավարկային քաղաքականության բարելավում. գնաճի նպատակադրման քաղաքականություն և իրականացում» (Improving Monetary Frameworks-Inflation Targeting: Policy and Implementation) և «Բարձրագույն մակրոտնտեսական մոդելավորում» (Advanced Macro-Modeling) տեխնիկական աջակցության ծրագրերի շրջանակում, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) Հարավարևելյան Եվրոպայի և կովկասյան երկրների գլխավոր տնօրեն Օլիվյե Դեկամպի գլխավորած պատվիրակությունը, FINEST S.p.A. իտալական ներդրումային ընկերության նախագահ Ռենատո Պույատիի գլխավորած պատվիրակությունը, Լեհաստանի ազգային բանկի (National Bank of Poland) պատվիրակությունը՝ բանկի նախագահ Մարեկ Բելկայի գլխավորությամբ, Ուկրաինայի արժեթղթերի և ֆոնդային շուկայի ազգային հանձնաժողովի նախագահ Դմիտրի Տևելևի գլխավորած պատվիրակությունը:



Հաշվետու ժամանակաշրջանում Կենտրոնական բանկը կազմակերպել է մի շարք գործնական հանդիպումներ, կլոր սեղանի նիստեր և համաժողով:

2012 թ. հունիսին 21-24-ը Երևանում կայացել է Սևծովյան առևտրի և զարգացման բանկի 14-րդ տարեկան համաժողովը և գործարար ֆորում՝ «Հայաստան. աճի հնարավորություններ և միջազգային փորձը» թեմայով (14th Annual Meeting of the Board of Governors of the BSTDB and Business Forum Armenia: Opportunities for Growth and International Experiences): Տարեկան համաժողովին մասնակցել են Սևծովյան առևտրի և զարգացման բանկի 11 անդամ-երկրներից 10 երկրների (Ալբանիա, Հայաստան, Բուլղարիա, Վրաստան, Հունաստան, Մոլդովա, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Թուրքիա և Ուկրաինա) կառավարիչները, տնօրենները և պատվիրակությունները:

2012 թ. սեպտեմբերի 3-4-ը Կենտրոնական բանկի նախագահի հրավերով Երևան է ժամանել Չիլիի Հանրապետության աշխատանքի և սոցիալական ապահովության նախկին նախարար Խոսե Պինիերան՝ «Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային բարեփոխումների ընթացքը» թեմայով կլոր սեղան անցկացնելու և դասախոսություն կարդալու նպատակով:

2012 թ. ընթացքում շարունակվել են աշխատանքները երկկողմ, ինչպես նաև միջկառավարական հանձնաժողովների շրջանակում նախատեսված՝ օտարերկրյա կենտրոնական բանկերի միջև համաձայնագրեր և փոխըմբռնման հուշագրեր ստորագրելու ուղղությամբ:

2012 թ. փետրվարի 24-ին Կենտրոնական բանկի և Լեհաստանի ֆինանսական վերահսկողության մարմնի (Polish Financial Supervision Authority) միջև ստորագրվել է «Բանկերի վերահսկողության բնագավառում համագործակցություն» փոխըմբռնման հուշագիրը:

2012 թ. ապրիլի 24-ին Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում Կենտրոնական բանկը պաշտոնապես դարձել է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բանկային վերահսկողների խմբի 23-րդ անդամը (Group of Banking Supervisors from Central and Eastern Europe, BSCEE-Group):

2012 թ. մայիսի 25-ին Երևանում և 2012 թ. հունիսի 5-ին Կիևում Կենտրոնական բանկի և Ուկրաինայի արժեթղթերի և ֆոնդային շուկայի ազգային հանձնաժողովի միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր:

2012 թ. հունիսի 29-ին Երևանում ՀՀ կրթության և գիտության նախարարության, Կենտրոնական բանկի և «Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամի միջև ստորագրվել է Հուշագիր մտադրությունների մասին:

2012 թ. նոյեմբերի 13-ին Երևանում Կենտրոնական բանկի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության KfW բանկի միջև ստորագրվել է վարկի տրամադրման պայմանագիր՝ Հայաստանում վերականգնողական էներգետիկայի ոլորտում զարգացման ծրագրի (3-րդ փուլ) վերաբերյալ:

Կենտրոնական բանկի աշխատակիցները մասնակցել են Համաշխարհային բանկի, Գերմանա-հայկական հիմնադրամի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության, Միջպետական բանկի, Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական ֆոնդի, Եվրոպական կենտրոնական բանկի կողմից կազմակերպված տարեկան հանդիպումների, բանկային և ֆինանսական միջազգային համաժողովների, գիտաժողովների, «կլոր սեղանի» նիստերի, խորհրդակցությունների, ցուցահանդեսների և աշխատանքային սեմինարների, որտեղ հանդես են եկել զեկուցումներով և ելույթներով:





2012 թվականին ՀՀ կենտրոնական բանկը թողարկել է արծաթե հուշադրամ՝ նվիրված Հավաքական անվտանգության մասին պայմանագրի ստորագրման 20-ամյակին և Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության 10-ամյակին »

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ »

2012 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է իր գործունեության, ֆինանսական ոլորտում իրականացված նախաձեռնությունների վերաբերյալ հանրության իրազեկման աշխատանքները:

Հասարակայնության տեղեկացմանն ու իրազեկմանն ուղղված քաղաքականության իրականացման նպատակով Կենտրոնական բանկը համագործակցել է Հայաստանի բանկերի միության, Հայաստանի հիփոթեքային շուկայի մասնակիցների միության, Ապահովագրողների ասոցիացիայի և սպառողների շահերը պաշտպանող կազմակերպությունների հետ:

Հանդիպումների ընթացքում ֆինանսական դաշտում գործող կազմակերպություններին ներկայացվել են դրամավարկային քաղաքականության, ֆինանսական վերահսկողության և ֆինանսական կայունության ապահովման ոլորտում գլխավոր դրամատան գործողությունները, ծրագրերը, օրենսդրական նախաձեռնությունները:

ՁԼՄ-ների ներկայացուցիչների համար կազմակերպվել են դրամավարկային քաղաքականության և ֆինանսական կայունության թեմաներին առնչվող մի շարք կրթական սեմինարներ:

Հասարակայնության հետ կապերի ծառայությունը ամսական պարբերականությամբ հրապարակել է ռեպո (վերաֆինանսավորման) գործառնությունների տոկոսադրույքների մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումները: Որոշման մասին համառոտ հաղորդագրությունը հրապարակվել է Խորհրդի որոշման կայացումից անմիջապես հետո, իսկ 10 օրվա ընթացքում հրապարակվել է Կենտրոնական բանկի խորհրդի արձանագրությունը:

Հասարակայնության հետ կապերի ծառայությունը կազմակերպել է 7 միջոցառում՝ զանգվածային լրատվամիջոցների մասնակցությամբ և 12 հարցազրույց: 2012 թվականի ընթացքում ծառայությունը ստացել է գրավոր և բանավոր 39 հարցում, որոնց տրվել են սպառիչ պատասխաններ: Կենտրոնական բանկի գործունեության լուսաբանման նպատակով թողարկվել է 186 մամլո հաղորդագրություն: Բացի այդ, Կենտրոնական բանկի խորհրդի նիստերի մասին հրապարակվել են 27, իսկ ռեպո գործառնությունների տոկոսադրույքի մասին՝ 24 հաղորդագրություններ:

ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Այցելուների կենտրոնը իր գործունեությունը սկսել է 2011 թ. սեպտեմբերի 20-ից:

Այցելուների կենտրոնի ստեղծման նպատակը կրթական գործիքների՝ ստատիկ, թեմատիկ և ինտերակտիվ ցուցադրությունների միջոցով Կենտրոնական բանկի գործունեության և դերի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացումն է:

2012 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին Այցելուների կենտրոնն ընդունել է 7200 այցելու՝ 6304 աշակերտ/ուսանող, 896 ուսուցիչ/դասախոս, քաղաքացի:

2012 թ. ապրիլի 16-23-ը Կենտրոնական բանկն Աշտարակ քաղաքում կազմակերպել է ՀՀ ազգային դրամի պատմությանը վերաբերող ցուցահանդես, որտեղ ներկայացվել են ինչպես հին հայկական դրամները, այնպես էլ ժամանակակից դրամանիշերը (թղթադրամները, մետաղադրամները և հուշադրամները), դրանց պաշտպանական հատկանիշներն ու պատրաստման գործիքները: Ցուցահանդեսը ունեցել է 713 այցելու՝ 597 աշակերտ/ուսանող, 116 ուսուցիչ/դասախոս, քաղաքացի:

Նոյեմբերի 12-16-ը Երևանի ավագ դպրոցների 25 ուսուցիչների համար Այցելուների կենտրոնում կազմակերպվել է «Հասարակագիտություն» առարկայի «Տնտեսագիտություն» բաղադրիչը դասավանդող ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը:

[10] *Մանրամասն տե՛ս www. visitorscenter.cba.am կայքում:*





«Մենամարտի արվեստը» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում Կենտրոնական բանկը 2012 թվականին թողարկել է «Կարատե» և «Կոխ» արծաթե հուշադրամները »

ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԱՈՒԴԻՏ »

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Կենտրոնական բանկում ներքին աուդիտի գործառույթն իրականացնում է Վերստուգիչ խումբը, որը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից, «ՀՀ ԿԲ մասին» օրենքի համաձայն, ձևավորված ստորաբաժանում է: Վերստուգիչ խումբն առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, Ներքին աուդիտորների ինստիտուտի (IIA) Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներով (IPPF) և Ներքին աուդիտորի էթիկայի կանոններով, ինչպես նաև Տեղեկատվական տեխնոլոգիաների «CobIT», «VolIT» և «Risk IT framework» փաստաթղթերով:

Վերստուգիչ խմբի աշխատակիցներն անդամակցում են Ներքին աուդիտորների ինստիտուտին (IIA), Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիային (ISACA), Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիային (ACCA), Խարդախության բացահայտման որակավորված փորձագետների ասոցիացիային (ACFE)՝ հանձնելով այդ կազմակերպությունների կողմից սահմանված համապատասխան որակավորման քննություններ (CIA, CISA, CRISK, ACCA, CFE):

Վերստուգիչ խումբը, հիմնվելով ԿԲ Խորհրդի կողմից հաստատված աուդիտի տարեկան ծրագրի վրա, 2012 թ. իրականացրել է նպատակային և պարբերական ստուգումներ՝ ռիսկերի կառավարման, հսկողության և կառավարչական գործընթացների արդյունավետության հավաստիացման նպատակով: Յուրաքանչյուր աուդիտորական հանձնառության համար ներկայացվել է հաշվետվություն՝ առաջարկներով և դրանց իրականացման համար անհրաժեշտ համաձայնեցված գործողություններով:

2012 թ. Վերստուգիչ խումբը շարունակել է ակտիվ համագործակցել գործընկեր բանկերի և այլ կազմակերպությունների հետ (Եվրոպական կենտրոնական բանկ, Նյու Յորքի դաշնային պահուստային բանկ, Գերմանիայի Բունդեսբանկ, Լիտվայի բանկ, Նիդեռլանդների բանկ, Իտալիայի բանկ, Չեխիայի ազգային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ, IIA, ACCA, ISACA):



2012 թ. Վերստուգիչ խումբը ունեցել է նկատելի ձեռքբերումներ ստորև ներկայացված ուղղություններով.

- **Վերստուգիչ խմբի գործունեության արտաքին գնահատում**

Նիդեռլանդների բանկի փորձագետների կողմից Վերստուգիչ խմբի գործունեության արտաքին գնահատման արդյունքում Վերստուգիչ խմբին հանձնվել է Ներքին աուդիտորների ինստիտուտի (IIA) հրապարակած ստանդարտներին և էթիկայի կանոններին համապատասխանության հավաստագիր: Փորձագետները նշել են, որ Կենտրոնական բանկի վերստուգիչ խումբը լավագույններից է իրենց կողմից գնահատված ներքին աուդիտի ստորաբաժանումների շարքում:


- **Աուդիտի կառավարման ավտոմատացված ծրագրի ներդրում**

2012 թ. ՎԽ աշխատանքների արդյունավետության բարձրացման համար ներդրվել է ավտոմատացված ծրագիր, որը հնարավորություն է տալիս աուդիտի հանձնառության ողջ գործընթացը՝ պլանավորումից մինչև հաշվետվություն և համաձայնեցված գործողություններ, փաստաթղթավորելու մեկ համակարգի միջոցով՝ ստանդարտացված ձևաչափերով և աշխատանքային փաստաթղթերով:

- **Որակավորում և ուսուցում**

Վերստուգիչ խմբի երեք աշխատակիցներ շարունակել են ACCA որակավորման քննությունների հանձնումը, որոնցից մեկը հաջողությամբ հանձնել է որակավորման համար պահանջվող բոլոր քննությունները: Եվս մեկ աշխատակից հաջողությամբ հանձնել է «Certified Fraud Examiner» որակավորման բոլոր քննությունները:















2012 թվականին Կենտրոնական բանկը թողարկել է արծաթե հուշադրամներ՝ նվիրված Սբ. Էջմիածնի Մայր տաճարին, Նորավանքին, Գնդեվանքին, Սանահինի վանքին, Գոշավանքին և Կեչառիսի վանքին »